ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության գործունեության 2018-2022 թվականների միջոցառումների ծրագրով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մասով նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ

ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N1030-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով Կոմիտեի մասով նախատեսված է թվով 9 միջոցառում:

Նշված 9 միջոցառումներից 2018 թվականի մասով նախատեսված է թվով 4 միջոցառման իրականացմանն ուղղված քայլերից 7-ը, որոնցից 6-ով նախատեսված աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետում, 1 միջոցառման մասով ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ժամկետի երկարաձգման առաջարկություն՝ համապատասխան հիմնավորմամբ:

Կոմիտեի մասով նախատեսված հիմնական աշխատանքներն ուղղված են եղել՝

- ՀՀ Սյունիքի և ՀՀ Արարատի մարզերի բոլոր համայնքները ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակմանը,
- Սևանա լճի կենտրոնական գոտու ռեկրեացիոն գոտիների զարգացմանը նպատակով «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության» նախագծային աշխատանքների իրականացմանը (նշված հատվածում նախագծվում են հետիոտն ծովափնյա ճեմուղի, հյուրանոցային, ժամանցային, քոթեջային և այլ գործառնական գոտիներ, նախագծի իրականացումը խթանելու է ներդրումային ծրագրերի հոսքն այս տարածաշրջան).
- Երևանի փոքր կենտոնի բեռնաթափման և քաղաքի արվարձանների զարգացման համար իրավական նախադրյալների ստեղծմանը (մշակվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ, որը հնարավորություն կստեղծի մշակել Երևանի փոքր կենտրոնի մանրամասն գոտևորման նախագիծը և գոտիներում սահմանվող կանոնակարգերը, յուրաքանչյուր թաղամասի և հիմնական փողոցների կառուցապատման կանոնները, առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգմանն ուղղված ծրագրերը և միջոցառումների ցանկը)
- գոտևորման նախագծերի մշակման և հաստատման գործընթացի բարելավմանը, նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջների վերանայմանը,
- քաղաքաշինության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի հաստատման մասով քաղաքաշինության բնագավառի պետական կառավարման մարմնի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի իրավասությունների հստակեցմանը,
- Քաղաքաշինության բնագավառի նորմատիվ փաստաթղթերի՝ մասնավորապես, «Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», «Պողպատե կոնստրուկցիաներ»,

«Հասարակական շենքեր և շինություններ», «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» շինարարական նորմերի մշակմանը,

- հասարակական և բազմաբնակարան շենքերի անձնագրերի օրինակելի ձևերի մշակմանը,

- բազմաբնակարան շենքի պահպանման, հուսալիության բարելավման, էներգաարդյունավետության բարձրացման, շահագործման կանոնների մշակմանը,

- աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացմանը: